

ՀՈՍԱՆԻՇՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԻՍԱԿԱՆ» ԵՐԿՈՒՄ

Սույն հոդվածի շրջանակներում քննել ենք հոմանիշ¹ բառերի ռճական կիրառությունը Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Միսական» երկում՝ նպատակ ունենալով հոմանիշային շարքի անդամների գործառական հաճախականության քննության միջոցով ցույց տալու, թե ո՞ր բառաշերտին է նախապատվություն տվել հեղինակը, ինչպես նաև փորձել ենք բնութագրել հոմանիշային շարքի անդամների իմաստաբանական հատկությունները (տեսական, աստիճանական և այլն), պարզել ռճական կիրառության ոլորտները (բարբառային, ժողովրդախոսակցական և այլն) և առանձնացնել դրանք ըստ հոմանիշային շարքի անդամների քանակային կազմի:

Հոմանիշ կոչվում են տարբեր ձևեր, բայց նույնական կամ մերձավոր իմաստ ունեցող բառերը: Հոմանիշ բառերի խումբը կոչվում է հոմանիշային շարք²:

Ստ. Օրբելյանի երկի լեզվական հարստության կարևոր չափանիշներից է հոմանիշների առատությունը: Հոմանիշները լեզուն դարձնում են առավել ճկուն և սահուն, պատկերավորություն են տալիս խոսքին և հնարավորություն բնձեռում խոսակցելու անհարկի կրկնությունից և ոճի միօրինակությունից:

Հոմանիշ բառերը ռճական բազմազանություն են ապահովում. դրանք ծառայում են բառերի իմաստների նրբերանգային արտահայտմանը, խոսքի արտահայտչականության ուժեղացմանը և գեղարվեստական խոսքի անթերի ու ճշգրիտ կառուցվածքին³:

Պետք է տարբերակել հոմանիշային զույգ և հոմանիշային շարք հասկացությունները: Հոմանիշային զույգը իմաստային առնչակից հարաբերություններով կապված երկանդամ հոմանիշներից է բաղկացած:

Հոմանիշային շարքը, ըստ առկա հոմանիշների քանակի, լինում է եռանդամ, քառանդամ և բազմանդամ. շարքի ելակետայինը երկանդամ ձևն է:

¹ Եկատենք, որ լեզվաբանական գրականության մեջ այս եզրույթի իմաստով տարբեր տերմիններ են գործածվել՝ հոմանիշ, համանիշ, նույնանիշ: Ժամանակակից ընկալմամբ հոմանիշ անվանվում է ընդհանուր հասկացությունը, իսկ համանիշ և նույնանիշ տերմինները դրա տարատեսակներն են. համանիշը ցույց է տալիս իմաստով մոտ բառեր, նույնանիշը՝ բացարձակ նույնություն (տե՛ս Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Շալոյց լեզու, I մաս, Ա Պրակ, Եր., 1980, էջ 236): Դրանք լեզվական մեկ միավորի տարատեսակներն են և չեն դիտվում որպես լեզվական անկախ իրողություններ (տե՛ս Սուքիասյան Ա., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Եր., 1971, էջ 108):

² Աղայան Էդ., Շնդհանուր և հայկական բառացիություն, Եր., 1984, էջ 67:

³ Մելքոնյան Ս., Բառական հոմանիշների ռճական կիրառությունը գեղարվեստական լեզվում, Լրաբեր Հասարակական գիտությունների, Եր., 1978, № 4, էջ 11-23:

Հումանիշային շարքը, ըստ նրանում առկա հումանիշների քանակի, լինում է երկանդամ, եռանդամ, քառանդամ և բազմանդամ. ելակետայինը երկանդամ ձևն է:

1) Երկանդամ հումանիշներ. այս զույգի անդամները, ունենալով մոտ իմաստներ, միաժամանակ ունեն որոշակի տարբերություններ՝ տեսակային, աստիճանական, արտահայտչական և այլն: Հումանիշային զույգի անդամներից մեկը հաճախակի կիրառություն ունի, իսկ մյուսը՝ հազվադեպ: Դա պայմանավորված է հեղինակի ոճով. բառապաշարի նկատմամբ ունեցած մոտեցումներով, նաև՝ ժամանակաշրջանի լեզվական ազդեցությամբ:

Այսպես, Ստ. Օրբելյանի երկում երբեմն հանդիպում են միջինհայերենյան բառեր, որոնք, սակայն, մեծամասնություն չեն կազմում, ինչպես՝ ժամանակ (186) – ատեն (9)⁴ - «Որ մնացեալ էին ի վաղ ժամանակաց յամուրս քարանձախին» (1, 49): «Մեղաց մերոց համարս տացե յաւուր անեղ ատենին Քրիստոսի» (1, 283):

Միջինհայերենյան ատեն տարբերակը գործածության հաճախականության առումով անհամեմատ զիջում է հինհայերենյան ժամանակ ձևին: Հավելենք, որ «ատեն» բառը հանդիպում է առավելապես երկուսի վկայված փաստաթղթերում⁵:

Ստ. Օրբելյանը հաճախ է գործածել զրաբարին հատուկ ոճական հնարներից մեկը՝ ավելադրությունը. սա արվել է ոճին զարդարանք տալու, խոսքը գունեղ և հետաքրքիր դարձնելու նպատակով, ինչպես՝ գոյժ (5)-բոթ (2) - «Ապա լուեալ Վարդանայ գղառն գոյժ մահարար բոթի» (1, 103): Վրեժ (5) – քեն (3) - «Եթէ վրիժուց նախանձու քինուս այստրիկ յանգումն արասցես» (1, 78):

Հաճախ երկուսի հանդիպում են հումանիշներ, որոնք հանդես են եկել նույն նախադասության մեջ որպես բազմակի անդամներ. սա խոսքը տպավորիչ դարձնելու և ասելիքը շեշտելու նպատակ ունի: Այդ բառերն ըստ կազմության կարելի է ներկայացնել տարբեր խմբերում.

ա) Պարզ հումանիշներ. ողբ (13) – կոծ (2) - «Իսկ զդիակ գեղեցիկ երիտասարդին բարձեալ եղբարցն ի տեղուջէ ճակատուն անբաւ ողբովք եւ բարձրակառայ աղաղակաւ՝ տարեալ եղին ընդ իօրն իւրում Աշտոյ արարեալ կոծ մեծ ի վերայ նորա» (1, 240): Նժդէն (2) – պանդուխտ (1) - «Հաստատեցին ի Վրաց աշխարհէն լինել պանդուխտ եւ նժդէն գոլ ամենայն Միւսեաց» (1, 89):

բ) Նույնածանց հումանիշներ. նեղութիւն (20) – անկուրթիւն (5) - «Եղիցին յանձկուրթեան եւ ի նեղութեան առաւել քան զորս ի գերութեան» (1, 190):

գ) Ածանցավոր և բարդ հումանիշներ. անշեջ (6) – մշտավատ (1) - «Զկանթեղունս մշտավատս եւ անշեջս վառեալ լինէին» (1, 117):

Նշված պարզ, ածանցավոր և բարդ բառերը միմյանց միացել են և շաղկապով. որոշ դեպքերում՝ շարահարությամբ. փութամ (7) – ճեպեմ (1) - «Մակս որոյ ելեալ ի

⁴ Հումանիշային շարքերի անդամները դասավորված են ըստ բառերի գործառական հաճախականության. իսկ փակագծերում տրվում է տեքստում տվյալ բառի գործառական վիճակագրությունը:

⁵ Բնագրային օրինակները բերված են երկի առաջին՝ փարիզյան հրատարակությունից (տե՛ս Օրբելյան Ստ., Պատմութիւն նահանգին Սիսական, հ.հ. 1-2, Փարիզ. 1859):

⁶ Ստ. Օրբելյանը երկում գեղեցիկ է նաև այլ գրություններ՝ ընծայագրեր, նամակներ և այլն, որոնց հեղինակն ինքը չէ: Խոսքն այդ գրությունների մասին է:

մենարանե անտի՝ *փութայ, ճէպի յաղբիրն իմաստից*» (1, 176): *Ապալերկ (3)-ամալի (1)* - «Մնաց երկիրն անիշխան, *ապալերկ, ամայի* յամենայն շինութեանց» (1, 68):

Երբեմն անհարկի կրկնությունից խուսափելու համար հեղինակը գործածում է նույնանիշ հոդակապավոր բարդություններ միմյանց հաջորդող նախադասություններում. *սենեկապետ (5) - սենեկապան (1)* - «Եւ երթալ *սենեկապետին* ծանոյց զայս արքայի» (1, 91): «Հրամայեալ *զսենեկապանն* Բաբկայ ի ներքս ածել զՍամ Գնթունի» (1, 91): Կամ՝ նույնանիշ *սերոբէասարաս (1) - սերոբէատիպ (1)* բարդ բառերը երկուսն իմաստային ու գործառական տարբերություններ չեն դրսևորում. «Իմաստեոյն եւ *սերոբէասարաս* առն Աստուծոյ» (1, 174): «Գնայր... առ աստուածագգեաց եւ *սերոբէատիպ* հարանց հայր Սաղոմ» (1, 175):

Երկուսն կենսունակ գործածություն ունի *ժողովել (57) - հաւաքել (6)* - հոմանիշային զույգից առաջինը. «Ջպէսպէս մրգոց համբարս անթիւս *ժողովեցին* ի Բաղաբերդ» (1, 73)⁷: «Ջոր զտաք՝ *հաւաքեցաք* ի նոցանէ ամենայն ճշդիս» (1, 48):

2) *Եռանդամ հոմանիշային շարքեր*, հաճախ միևնույն երևույթը բնութագրելու համար գործածվում է երեք մերձիմաստ բառ: Այդպիսի հոմանիշային շարքի երեք անդամներից մեկը կարող է լինել բարբառային բառ, ինչպես՝ ունայն (*5) - սնոտի (4) - զուրկ (1)* - «*Ջուրկ եւ ունայն* ի ճշմարիտ գեղեցկութեանցն» (1, 56): «Հրամայեալ եմ նոցա լուծանիլ ի նոյն *սնոտի* բարբառն վերածայնել» (1, 85):

Ընդհանուր առմամբ երկուսն առավելապես հաճախ հանդիպում են համագործածական բառեր, թեև երբեմն հեղինակը համեմել է խոսքը նաև զրաբարյան սակավ գործածություն ունեցող բառերով, օրինակ՝ *յարիշտակել (58) - կողոպտել (15) - կապտել (1)* - «Թէ որ... զայս տեղիս *յարիշտակել* խորհի» (2, 16): «Առնալ յարարի զբերդն՝ *կապտեցին, կողոպտեցին* զամենայն սպասս եկեղեցւոյն» (2, 191): Գրաբարյան *կապտել* բայի մեկանգամյա կիրառությունը վկայում է, որ ժամանակի ընթացքում դասական հայերենի որոշ բառեր աստիճանաբար գործածության հաճախականության առումով տեղի էին տալիս:

Երբեմն միևնույն նախադասության մեջ հանդիպում են հոմանիշային շարքի բոլոր երեք անդամները՝ առավել սաստկացնելով միտքը. *զղջումն (8) - ապաշաղվանք (2) - խոստովանութիւն (1)* - «Ջգնեոյր զհայրենի զգեստն մաքրութեան մեծամեծ *զղջմամբ* եւ *ապաշաւանք, խոստովանութեամբ*» (1, 216):

Հօտ (19) - ցոլիք (4) - ցոկ (1), «Ետու եւ *ցոլիքս* եզանց եւ *ցոկս* զուարակաց եւ անդեայս եւ *հօտս* ոչխարաց» (1, 224): «Ջոլիք» բառը Ստ. Օրբելյանի երկում գործածվում է «եզներ» բառի հետ՝ «եզների խումբ» իմաստով, հանդիպում է նաև «ձկների խումբ» իմաստով⁸:

Հոմանիշները բնութագրվում են որոշակի աստիճանականությամբ. այս դեպքում անդամներից յուրաքանչյուրը ցույց է տալիս երևույթի մի աստիճանը.

⁷ «Ժողովել» բայը ժամանակակից հայերենում խոսակցական ոլորտի բառ է, զրաբարում այն գրական բառ էր և լայն տարածում ուներ:

⁸ «Ջուրկ» բառը ժամանակակից հայերենում գրական բառ է, հին հայերենում՝ բարբառային էր (գրական ձևն էր «զիրկ»):

⁹ Հստ «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ի. թշնամիների խումբն է (Սուքիասյան Ա. Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 279):

ուժգնությունը. պատերազմիմ (12) – կռուիմ (3) – ճակատիմ (3) – «Աղաչեցին մի եւս պատերազմել ընդ անպարտելի ամրոցին Բաղաբերդի» (1, 76): «Ճակատեցան ընդ Պարսից եւ գամ մի յաղթեցին» (1, 106): «Կռուէին ի վերայ գեղեցիկ գեղջն Որդուատայ» (1, 121): Թվարկված բայերը ընդհանուր առմամբ նշանակում են «բախվել», սակայն դրանցից յուրաքանչյուրը «բախման» որոշակի աստիճանն է ցույց տալիս. կռուիմ՝ չեզոք ձևն է, ճակատելը երևույթի ավելի ուժգին լինելն է, իսկ պատերազմիմը՝ առավելագույն աստիճանը:

3) Քառանկամ շարքեր. Ստ. Օրբելյանը հաճախ միևնույն երևույթը բնութագրելու համար գործածել է նույն իմաստն արտահայտող չորս բառ: Գործառական այս դերով հաճախ հանդիպում են մակբայական հոմանիշներ, ինչպես՝ դարձեալ (70) – վերստին (39) – կրկին (27) – միւսանգամ (2) – «Վերստին միացոյց ի գլուխն գովելի» (2, 29): «Մինչ կրկին նորոգեր գշայաստանեայս» (1, 96): Դեռևս հինգերորդ դարի մատենագրության մեջ մակբայական այս շարքի անդամների գործածության հաճախականությունը նույնական չէր. ակնհայտորեն ավելի շատ է կիրառվում դարձեալ մակբայը: Այն դասական հայերենում կիրառվում էր այլ մակբայի հետ եւս, ինչպես հանդիպում է սույն երկում. «դարձեալ վերստին», «դարձեալ միւսանգամ». «Եւ դարձեալ միւսանգամ գնաց սա ընդ արքային Տրդատայ» (1, 58): «Դարձեալ վերստին սասանեցան դառնապէս» (2, 78): Վերստինը՝ հինգերորդ դարում կենսունակ չէր, իսկ հետագա դարերում, մասնավորապես 13-րդ դարում, այն գործածության հաճախականության առումով զիջում է միայն դարձեալ մակբային:

Փութանակի (10) – փութապէս (10) – վաղվաղակի (7) – փութով (2) – «Հայցեր տեսուչս և առաջնորդս աշխարհին, զոր փութով եւ յօժարութեամբ յանձն առնու շնորհել» (1, 59): «Փութանակի հրաւիրակս հանեալ կոչէր զամենեսեան» (1, 100): «Եւ աւերն ամենայն փութապէս յառաջին լռութիւն շինութեան հասեալ լինէր յապարանս նոցա» (1, 238): «Վասն որոյ վաղվաղակի ի խնդիր լինէին նմա» (2, 93):

Առաջին երեք բառերը կազմվել են մակբայակերտ ածանցներով (–ակի, –պէս), իսկ փութով ձևն առաջացել է փոյթ բառի գործիական հոլովի քարացումից՝ վերածվելով մակբայի:

Հոմանիշները բնութագրվում են տեսակային տարբերություններով. այսինքն՝ շարքի բոլոր անդամները ցույց են տալիս նույն առարկան, սակայն նրանցից յուրաքանչյուրը վերաբերում է առարկայի առանձին տեսակի. Ճանապարհ (23) – շաւիղ (6) – ոռհ (2) – կածան (1) – «Ուղղեսցուք զընթացս բանիս ի վերայ անկայտ շաւղաց անկոխ ոռհիս» (1, 48): «Չճանապարհս իմ ուղիղ արա ինձ Տէր» (1, 122): «Եւ Լիպարիտն իւրայովքն գտեալ կածան մի» (2, 145):

Ճանապարհը ոճականորեն չեզոք ձևն է, ընդհանրական տարբերակը, կածանը՝ նեղ ճանապարհը, շաւիղը ուղիղ ճանապարհն է, «ոռհ» բառը եբրայական փոխառություն է՝ որրորդ իմաստով:

Հոմանիշային շարքերի անդամներին հատուկ է արտահայտչականությունը. շարքի անդամները կարող են արտահայտել խոսողի վերաբերմունքը կամ գնահատականը, սրանք ոճականորեն տարասեռ բառեր են. սպանանեմ (39) – սա-

ուուկեն (31) – կոտորեմ (26) – խողխողեմ (4) սպանանել՝ չեզոք ձևն է, իսկ սատակել բայն արտահայտում է անարգական վերաբերմունք: «Հրամայե՛ սպանանել զևս» (1, 125): «Վերին օգնությամբ հարեալ սատակեաց ի պատերազմի զբուրգն անհազին զԳդեհուն» (1, 104):

Մյուս հոմանիշներն ունեն տեսակային տարբերություններ. *խողխողելը* ցույց է տալիս սպառնալից ռոտշակի եղանակ, իսկ *կոտորել* բայը պահանջում է միայն հոգևակի թվով դրված ուղիղ խնդիր. «Եհար Վասակ սրով զեղբայրն, և *խողխողեաց* մերձ ի մահ» (1, 121): «Հանկած մտանն ի վանքն յառաւօտուն, և *կոտորէ* զկրօնաւորսն» (1, 128):

Դիւահար (2) – դիւաբախ (2) – այսահար (2) – դիւապատիր (1) հոմանիշային շարքում բառերի իմաստները լիովին համընկնում են. սրանք հույսանիշներ են. «Որ էր *դիւաբախ*, և յետոյ ի դիւեն խեղդամահ եղև» (1, 104): «Լինէին... *այսահարաց* ետրին աղօթիւք բժշկութիւնք» (1, 86): «Խուլք լուիցեն եւ *դիւահարք* բժշկեսցին» (1, 200): «Մի զրկեալ կողպտեսցի յագահողաց և ի *դիւապատիր* մարդկանէ» (1, 47):

Բառերի գրեթե հավասար հաճախականությամբ գործածությունը վկայում է, որ հեղինակը որևէ բառի նախապատվություն չի տալիս՝ լեզվում ապահովելով բառագործածության բազմազանություն:

4) *Բազմանդամ հոմանիշային շարքեր*. այսպիսի շարքերում ընդգրկված բառերը առանձին կարող են կազմել հոմանիշային գույգեր կամ եռանդամ և քառանդամ շարքեր, որոնցում եզրեր կարող են լինել բոլոր անդամները: Իմաստային առումով բազմանդամ հոմանիշային շարքերը ոճավորման առավել լայն հնարավորություններ են ընձեռում:

Հոմանիշային այս շարքում՝ *լամ (12) – արտասուեմ (2) – հատաչեմ (2) – հեծեծեմ – վայեմ (1) – կոծիմ (1) – (1) ողբամ (4)*. նկատելի է *աստիճանականություն*. *լալ, արտասուել* բայերը չեզոք ձևեր են, իսկ շարքի մյուս անդամները՝ *կոծել, ողբալ* և *այլն*, երևույթի առավելագույն աստիճանն են ցույց տալիս. «Համբուրէին *լալով* եւ *արտասուելով* զհրաքանչիւր խաչս» (1, 74): «*Լայր* սաստկագին, և աղիտորմ ողբով *հատաչէր*» (1, 121): «Անչափելի ողբովք *լայր* եւ *կոծէր* դառնապէս» (2, 57): «*Վայր* եւ *ողբայր* գցայց և գցերէկ» (1, 187): «Իսկ երանելի հայրապետն Դաւիթ լուեալ եւ անհնարին ողբովք *հեծեծէր*» (1, 211): Հաճախ այս շարքի մյուս բայերը հանդես են եկել լալ բայի հետ, ինչի հետևանքով գործառնապես այն գերակշռել է մյուսների համեմատությամբ:

Եկեղեցու և ընդհանրապես երկնայինի մասին խոսելիս հեղինակը գործածում է մի շարք հոմանիշներ, որոնք փոխաբերաբար ասված միտքը ոճավորում են, ինչպես՝ *անշաղախ (1) – անխառնուրդ (1) – անբիծ (2) – անբասիր (1) – անարատ (2) – անապական (3) – Ողջամիտ քարոզություն* սուրբ գրելեացս աստ մնալոց է *անապական* եւ *անխառնուրդ*» (1, 273): «Հիագոր շնորհօք ձոգույն պերճացեալ, սուրբ, *անբիծ, անարատ* եկեղեցիս Հայոց՝ *անբասիր* եւ *անշաղախ* հարսնս երկնաւոր Փետային» (2, 197): Այս բառերը ուղիղ իմաստով գործածվելու ժամանակ միշտ չէ, որ կարող են միմյանց փոխարինել:

երկու մեծամասնություն են կազմում ածականական և բայական հոմանիշային շարքերը:

Հոմանիշային շարքի անդամները կարող են լինել միակազմ (արտահայտված միայն մեկ բառով) և երկկազմ (երբ շարքի անդամներից մեկը կամ մի քանիսը հարադրական բարդություններ կամ դարձվածքներ են): Վերջիններս ունեն նույն իմաստը, ինչ հոմանիշային զույգի բառային անդամը: Սրանք տարաբնույթ շարքեր են, որոնք լինում են երկու տեսակ՝ բայական և անվանական:

Անվանական կապակցությունն բառ

Անվանական հարադրությունները և հոմանիշային զույգերը նույն բառերն են, որոնք միմյանցից տարբերվում են բաղադրիչների քերականական ձևավորմամբ. Մեծ Հայք (18)– Հայոց աշխարհ (37) - «Որ կոչի ի հոռոմ լեզուն պոռոտճրանտե Հայոց մեծաց» (1, 66): «Կամեր իբրն զքաղցկեղ ճարակել զաշխարհ Հայոց» (1, 143): Հայոց աշխարհ տարբերակն ավելի լայն գործածություն է ունեցել, որի համաբանությամբ կազմվել է նաև Հայաստան աշխարհ տարբերակը. Հայաստան (9)– Հայաստան աշխարհ (2) - «էր յայնմ ժամանակի Հայաստանի զպրութիւնս ևորոգ եւ շէն» (1, 143): «Ապա բաժանեալ Թորգոմայ զժառանգութիւնս օրդոյ իւրոյ՝ տայ զՀայաստան աշխարհս բոլոր սահմանօքն» (2, 113): Հայաստան տեղանունը անկախ կիրառությամբ չի հանդիպում հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, հետագայի հեղինակների մոտ սակավ օրինակներ հանդիպում են (օրինակ՝ Սեբեոսի երկում Հայաստան բառը հանդիպում է միայն մեկ անգամ¹⁰), իսկ Ստ. Օրբելյանի երկում առավել հաճախ է գործածվել:

Հոմանիշային զույգ կարող են կազմել նաև բառը և նրա շրջատությունը՝ հարադրական կապակցությամբ. Աստուած (306) – երկնաւոր թագաւոր (2) - «Սկիզբն ամենայն գոյութեանց՝ Աստուած» (1, 43): «Մտեալ յեկեղեցին պատրաստելին աթոռ երկնաւոր թագաւորին» (1, 272):

Բայական հարադրություններ. սրանք հիմնականում կազմվել են *դառնամ մատուցանեմ, ածեմ, առնեմ* բայերի միջոցով¹¹: Հեղինակը ոճավորման նպատակով հաճախ կազմել է նաև հարադրություններ՝ հարստացնելով ու բազմազան դարձնելով խոսքը¹²: Քանակային առումով, իհարկե, հարադրավոր ձևերը զիջում են հոմանիշային զույգի համադրական ձևերին: Բայական հարադրությունների գործածությունը բնորոշ է հայերենի բոլոր շրջաններին, սակայն հարադրությունների հարստությամբ աչքի են ընկել հայերենի բարբառները. այդ պատճառով այն առավել հատուկ է ժողովրդախոսակցական ոճին¹³:

¹⁰ *Բաղդիշյան Գ., Սեբեոսի լեզուն և ոճը. Հայոց լեզվի պատմության հարցեր. Եր., 1981, էջ 80:*

¹¹ *Դասական հայերենում հարադրավոր ձևերը հիմնականում կազմվել են առնել, լինել, նաև՝ առնուլ, տայ, դնել բայերի միջոցով, առավել հաճախ՝ առաջին երկուսի միջոցով (տե՛ս Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 83): Ինչպես ներսում է դրանց շարքը համարվել է ժամանակի ընթացքում, և երկուսն հանդիպում են նաև այլ բայերով առավել շատ կազմություններ:*

¹² *Բայական հարադրությունները Ա Մյորնյանը համարում է ոճաբանության ուսումնասիրության տիրույթ (Մյորնյան Ա., Քննական քերականություն աշխարհագր կամ արդի հայերեն լեզվի, Մասն երրորդ. Յոդուած Գ. Ոճեր, Եր., 1987, էջ 317-319):*

¹³ *Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 157:*

1) Հարադիր բարոյության անվանական բաղադրիչը և հոմանիշային գույգի արմատը նույնն են: Գրաբարի մի շարք հարադիր բարոյություններ միջին հայերենում ձևականորեն ձուլվել էին, կամ նրանց փոխարեն կազմվել էր մի նոր բառ: Այսպիսի հարադրությունները անհամեմատ սակավ կիրառություն ունեն. աւերեմ (28) - աւեր դարձուցանեմ (3) - «Հրամայեցին *աւերեալ* յատակել» (1, 297): «Վատնեալ գամենայն եւ *յաւեր դարձուցեալ» (1, 81): Աղօթեմ (6) - աղօթս մատուցանեմ (1) - աղօթս առնեմ (1) - «Եւ մեք *աղօթեմք* զի նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն խափանեցեմ» (1, 137): «Առանձին *աղօթս մատուցաներ* ի նմին» (1, 87): «Տայր *աղօթս առնել* զհշերապաշտմամբ» (2, 154): Աղերսեմ (1) - աղերս մատուցանեմ (1) - «Որ ես *աղերսեմ* առ ձեզ» (2, 182): «Եւ *աղերս մատուցանեմ* հասարակաց անմոռաց յիշման» (1, 301): Կողոպտեմ (15) - կողոպտու առնեմ (1) - «Կողոպտեցին գամենայն սպասս եկեղեցոյն» (2, 191): «Բայց նախ մտեալ ի կղզին *կողոպտու առնէին* գամենայն» (1, 234):*

Վերը բերված օրինակներում հարադրության անվանական բաղադրիչը ինքնուրույն բառ է և կարող է հանդես գալ նաև առանձին: Իսկ մեկ այլ՝ խափանեմ (21) - խափան ածեմ (1) օրինակում հարադրության խափան արմատական ձևը գուրկ է ինքնուրույն բառական արժեքից. «Զի նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն *խափանեցեմ*» (1, 137): «Ոչ կամեցեալ *խափան ածել* վարժարանին» (1, 157):

Որոշ դեպքերում դասական գրաբարում լայն տարածում ունեցող համադրական բայի փոխարեն Ստ. Օրբելյանի երկում հանդիպում է միայն հարադրավոր ձևը, ինչպես՝ աւետեմ համադրական բայի փոխարեն կիրառվում է աւետիս մատուցանեմ (1) հարադրավոր ձևը. «Զայս իմացեալ նորա՝ գայ առ Վասակ եւ *աւետիս մատուցանեմ* նմա զխորհուրդ արքային» (1, 90):

Հարադրավոր բարոյությունների անվանական բաղադրիչները գոյականներ և ածականներ են՝

2) Հարադրության անվանական բաղադրիչի և հոմանիշային գույգի արմատները տարբեր բառեր են, ըստ որում՝ հարադիր բարոյության անվանական բաղադրիչները ինքնուրույն բարոյություններ են, ինչպես՝ այրեմ (17) - հրակեզ առնեմ (1) - «Զհինն *այրեաց* հրով և այնպէս ազատեաց գամենայն եկեղեցիս» (2, 173): «Հրակեզ *առնէին* յամենայն աշխարհին Միւսեաց» (1, 74): Աւերեմ (28) - հիմնախիլ առնեմ (2) - Հրամայեցին *աւերեալ* յատակել» (1, 297): «Հիմնախիլ *արաբեալ* զգեղեցկայարմար աւանս շինից» (1, 81): Ամաչեմ (1) - կորազուխ լինիմ (1) - «Զի թէ միով իւրք պարտեալ *ամաչեցաք* և *կորազուխ եղաք*» (1, 105): Սպանանեմ (39) - դիաթաւալ կացուցանեմ (3) - «Հրամայեւ *սպանանել* զնա» (1, 125): «Վիմազմամբք գանձուն բազմութիւն պարսկական գօրուն գամենեսին *դիաթաւալ կացուցանէին*» (1, 75):

Հարադիր բարոյությունը հաճախ դարձվածքի արժեք ունի և հոմանիշային գույգ կարող է կազմել այլ բառերի հետ:

3) Որոշ դեպքերում բայական հարադրությունը և նրանից սերած համադրական բարոյությունը կազմում են հոմանիշային գույգ. երկիր սպազանեմ (6) -

երկրպագեմ (9) - «*Երկիր պագանե* կրակի եւ արեգական» (1, 99): «Սկսան *երկրպագեալ* եւ ասել» (2, 83):

Երբեմն համադրական բայաձևերում բաղադրության քերականական ածանցներն ընկնում են՝ հիմն արկանեմ (2) - հիմնարկեմ (3) - «*Հիմն արկին* սրբոյ կաթողիկէին յիններորդ ամի Գիւտոյ երանելւոյ» (1, 112): «Զոր եւ կարծեմք նորին *հիմնարկեալ*» (2, 45):

Հազվադեպ էլ հումանշային գույգ են կազմում հարադրական բայը և նրա համադրական տարբերակը. ակն ածեմ (2) - ակնածեմ (1) - «Յորմէ երկուցեալ *ակն ածեմք*» (2, 198): «Ոչ թողացուցին քակել գեկեղեցիան *ակնածեալ* ի Վրաց գորացն» (2, 221):

Երբեմն հեղինակը որևէ երևույթ առավել ընդգծելու, խոսքը գեղեցիկ և պատկերավոր դարձնելու նպատակով գործածում է դարձվածային կապակցություններ. «մեռնել» բայի փոխարեն նա կիրառում է փոխեմ ի կարգս հրեշտակաց (4) - մահ ընդ կենաց փոխանակեմ (1) կապակցությունները - «Եւ տուեալ զամենայն իշխանութիւն իւր յեղբայր իւր Տարսայիճն՝ ...ինքն *փոխի ի կարգս հրեշտակաց*» (2, 166): «Որք եւ նեղեալ յայնմ ժամանակի ի բոնաւոր թագաւորէն Պարսից՝ կամէին *զմահ ընդ կենաց փոխանակել*» (2, 114):

Հարադրավոր բայերի կիրառությունները երկում ոճական արժեք ունեն և պայմանավորված են ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ:

Ամփոփելով Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Միսական» երկում հումանիշ բառերի քննությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ պատմագրական երկը հարուստ է հումանիշներով, որոնք հեղինակին լայն հնարավորություն են ընձեռել երկը շարադրելու ճոխ բառապաշարով՝ գործածելով հիմնականում գրաբարյան բառեր և ոճավորման միջոցներ:

Երկում գործածված հումանիշները ներկայանում են հումանշային գույգով և հումանշային շարքով, մյուս կողմից՝ թե՛ գույգերում և թե՛ շարքերում առանձնանում են համադրական և վերլուծական կազմությունները (բայի համակարգում), բառ և բառակապակցություն իմաստային գույգերը (անվանական և բայի համակարգերում):

Հումանշային շարքերը ծառայում են իմաստի սաստկացման (աստիճանականության) ոճական հնարքի դրսևորմանը, շարքի կազմիչ անդամները վեր են հանում ժամանակագրական տարբեր շերտեր (գրաբարյան, միջինհայերենյան, բաբառային և այլն):

Հումանիշների քննությունը Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Միսական» երկի ոճագիտական համակարգի բացահայտման բաղադրիչներից մեկն է միայն: Այդ համակարգի բացահայտման ամբողջական քննությունը նորանոր ծալքեր կարող է բացահայտել XIII դարի հայերենի գրական-գործառնական հնարավորությունների տեսանկյունից:

ФУНКЦИОНАЛЬНО - СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СИНОНИМОВ В ТРУДЕ СТ. ОРБЕЛЯНА “ИСТОРИЯ СЮНИКА”

___ *Резюме* ___

___ *А. Аветисян* ___

Синонимы играют очень важную роль в языке, делают речь плавной и гибкой, дают возможность избежать однообразия и повтора. Лексические синонимы обеспечивают стилистическое разнообразие, они служат для усиления выразительности, точности и изысканности художественной речи. Используемые в труде Ст. Орбеляна “История Сюника” синонимы представляются синонимичной парой и синонимичным рядом, имеющими соотносительный и аналитический состав, составляющие члены которых указывают на разные хронологические и территориальные слои /грабара, среднеармянского, диалектного/.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ավետիսյան Անի Համլենտի – ք.գ.թ., 22 ԿՂՆ

Արարատի պետական թղթերի լեզուների ամբիոն,

E-mail: anizavetis@yandex.ru